# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 25 >> սեպտեմբերի 2015 թվականի N 82 ք.Գյումրի

ԱԼԲԵՐՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ, 163-րդ հոդվածների, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի <<դ>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշման N 1 հավելվածի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Ալբերտ Մարգարյանի 2015 թվականի սեպտեմբերի 25-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանին տրամադրել 2015 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդից մնացած մասը և 4 աշխատանքային օր ամենամյա լրացուցիչ արձակուրդը:
2. Ամենամյա արձակուրդի տևողությունը 12 աշխատանքային օր՝ 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 20-ը ներառյալ:
3. Ամենամյա արձակուրդի ընթացքում աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանի պարտականությունների կատարումը վերապահել վարչության պետի տեղակալ Լեոնիդ Դավթյանին:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝